



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

24.12.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/122

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից 03.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 03.12.2018թ. ներկայացրել է բողոք, որը կազմված էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

Բողոքներ քննող անձը՝ հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, վերադարձրել էր «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից 03.12.2018թ. ներկայացրած բողոքը՝ արձանագրված անհամապատասխանությունները երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկելու և Բողոքներ քննող անձին ներկայացնելու համար:

Ընկերությունը 06.12.2018թ. Բողոքներ քննող անձին է ներկայացրել բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել է հետևյալը.

«Գործի համառոտ նկարագրությունը և փաստերը.

«Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ԱՆ կարիքների համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 20 հոկտեմբերի 2018թ. «ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով գնման ընթացակարգին N 2 և N 27 չափաբաժիններով:

Համաձայն թիվ 8 արձանագրության, առ 14 նոյեմբերի 2018թ., մեր կազմակերպությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից 2-րդ չափաբաժնի մասով /3 հատ Դիագնոստիկ Ուլտրաձայնային Ստացիոնար Սարք/ և առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և բնութագրերը:

Մեր կազմակերպության կողմից նոյեմբերի 19-ին ուղարկվել են պահանջված փաստաթղթերը, առաջարկված սարքի ամբողջական բնութագիրը ներառյալ:

Նոյեմբերի 23-ին ստացել ենք թիվ 9 արձանագրություն, համաձայն որի ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին և մեզ առաջարկվել է 1 օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Մեր կողմից ուղարկվել է պարզաբանում՝ նշելով առաջարկված սարքի բազմաթիվ ակնհայտ առավելությունները, պահանջվածից բարձր դասի պատկանելիությունը և չնչին ոչ էական տարբերությունները: Սակայն, պարզաբանումը չի ընդունվել հանձնաժողովի կողմից և համաձայն թիվ 10 արձանագրության, առ 28 նոյեմբերի 2018թ, մեր առաջարկը մերժվել է ներկայացված պարզաբանումը բավարար հիմք չլինելու և ներկայացված տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին բավարար չգնահատվելու պատճառով:

Մրցույթի պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագիրը բաղկացած է եղել ընդհանուր 64 պարամետրերից: Այսինք, որպես պահանջ, ընդգրկվել է կոնկրետ սարք, կոնկրետ պարամետրերով, որին 100% չի կարող բավարարել ցանկացած այլ սարք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Մեր կողմից առաջարկվող սարքավորումը 38 պարամետրերով համապատասխանում է պահանջված պայմաններին:

22 պարամետրերով կան բացարձակ առավելություններ պահանջված ցուցանիշներից:

Օրինակ՝

-պահանջված մոնիտոր 17 դյույմ, թույլատվությունը՝ 1280x1024 փոխարեն, մեր առաջարկած սարքի մոնիտորը՝ LED 21.5 դյույմ, թույլատվությունը՝ 1920x1080;

-Պահանջված սականավորման խորությունը 38 սմ 30-ի փոխարեն;

-Դինամիկ տիրույթը՝ 208 Դբ 256 Դբ փոխարեն;

-Հաղորդման/ընդունման թվային վերամշակող ալիքների քանակը՝ 65000 փոխարեն 573.,440;

- Բոլոր դոպլերների ռեժիմում գունավորման քարտեզների քանակը՝ պահանջված 6 կամ 8 փոխարեն 1-12;

-Գունավոր դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ՝ պահանջված 227 փոխարեն 400;

-Բոլոր դոպլերների ռեժիմում հայտնաբերվող մաքսիմալ և մինիմալ արագությունների առավելություն, և այլ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

Վերոգրյալով պամանավորված՝ Բողոքաբերը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԶԲ-2018/41» ծածկագրով էլ. աճուրդի գնահատող հանձնաժողովի 28.11.2018թ. թիվ 10 արձանագրությամբ կայացված՝ «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը հայտարարել չեղյալ, ուսումնասիրել «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ -ի ներկայացրած սարքի բնութագիրը, պահանջված բոլոր ռեժիմների, դոպլերների և համալրման առկայությունը, հաշվի առնել առաջարկված սարքի բազմաթիվ առավելությունները և պահանջվածից ավելի բարձր դասի պատկանելիությունը և ընդունել «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը որպես համարժեք:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության ներկայացուցիչ Խաչիկ Խրիմյանը:

2. ՀՀ Առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ՅՈՒՆԻՍԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից 03.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2018 թվականի դեկտեմբերի 4-ի գրության՝ «ՅՈՒՆԻՍԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ, հայտնում եմ հետևյալը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին: Ընդ որում, հանձնաժողովը հայտերը գնահատում է հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում դրանք գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ «ՅՈՒՆԻՍԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում՝ նաև որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատումը գնահատող հանձնաժողովը իրականացրել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Հասմիկ Մնացականյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/122 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՅՈՒՆԻՍԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից 03.12.2018թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության Բողոքի վերաբերյալ Բողոքներ քննող անձին 03.12.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.10.2018թ. նիստի թիվ 5, 29.10.2018թ. նիստի թիվ 6, 12.11.2018թ. նիստի թիվ 7, 14.11.2018թ. նիստի թիվ 8, 23.11.2018թ. նիստի թիվ 9, 23.11.2018թ. նիստի թիվ 10 արձանագրությունները.

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին ի թիվս այլ

մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն:

Աճուրդ հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ Աճուրդի 2-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «ուլտրաձայնային սարքավորումներ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«Ուլտրաձայնային հետազոտման սարք 3 տվիչով, անխափան սնուցման սարքով և տպիչով Դիագնոստիկ հետազոտությունների համար նախատեսված հատուկ հնարավորություններով թվային ուլտրաձայնային ստացիոնար համակարգ:

- Ճառագայթի թվային ձևավորիչը, ոչ պակաս, քան՝ 12 բիթ,
- Փոխանցման (հաղորդման) ընդունման թվային վերամշակվող ալիքների քանակը, ոչ պակաս, քան՝ 65000,
- Դինամիկ տիրույթը, ոչ պակաս, քան՝ 208 Դբ,
- Լայնաշերտ և մուլտիհաճախականության սկանավորման առկայություն,
- Էխո-ազդանշանների զուգահեռ մշակման առկայություն,
- Էխո-ազդանշանների քառալիքանի մշակման առկայություն,
- Ֆոկուսներ ազդանշանի փոխանցման ժամանակ, առնվազն՝ 8,
- Սկանավորման խորությունը, ոչ պակաս, քան՝ 30 սմ,
- Պատկերի մեծացում մասշտաբի իրական ժամանակում, ոչ պակաս, քան՝ 16 անգամ, պատկերների սեզմենտար մեծացման առկայություն,
- «Սառեցված» պատկերի մեծացում, ոչ պակաս, քան՝ 16 անգամ,
- B-ռեժիմի առկայություն,

Կեղծ գունավորման քարտեզների քանակը՝ ոչ պակաս քան 6 M-ռեժիմի առկայություն
Կեղծ գունավորման քարտեզների քանակը՝ ոչ պակաս քան 6 • B- և M-ռեժիմների համակցում,

Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն (PW)

- Անկյան կորեկցիան ոչ պակաս, քան՝ $\pm 79^\circ$, քայլը ոչ ավել, քան՝ 2°
- PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 300 - 27900 Հց.,
- Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը, ոչ պակաս, քան՝ 8 մ/վրկ.
- Հայտնաբերվող մինիմալ արագությունը, ոչ ավել, քան՝ 4 սմ/վրկ.
- B- և PW-ռեժիմների համակցում ռեալ ժամանակում Գունավոր դոպլերի առկայություն
- PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 400 - 25000 Հց

- Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը, ոչ պակաս, քան՝ 181 սմ/վրկ.
- Հայտնաբերվող մինիմալ արագությունը, ոչ ավել, քան՝ 2,6 սմ/վրկ.
- Գունավորման քարտեզների քանակը, ոչ պակաս, քան՝ 8.
- Գունավոր դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ, ոչ պակաս, քան՝ 227,
- B- և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,
- B-, M - և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,
- B-, PW - և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,
- Սկանավորման անկյան փոփոխության տիրույթը գծային տվիչների համար, ոչ պակաս, քան՝ +/- 10 աստիճան Անընդհատ-ալիքային դոպլերի առկայություն
- Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը, ոչ պակաս, քան՝ 28 մ/վրկ, Էներգետիկ դոպլերի առկայություն (PA) • PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 400 – 24000 Հց,
- Գունային քարտեզների քանակը, ոչ պակաս, քան՝ 8,
- B- և էներգետիկ դոպլեր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,
- Անոթների հունի պատկերավորման բարձր տարածական/ժամանակային լուծման ռեժիմի օգտագործումը բոլոր կոնվեքսային և գծային հաղորդիչներով "• B-, PW- և Անոթների հունի պատկերավորման բարձր տարածական/ժամանակային լուծման ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում Հյուսվածքային հարմոնիկա" • Հիմնական հյուսվածքային հարմոնիկայի ռեժիմ; Բարդ բազմաալիքային պատկերավորում իրական ժամանակում • Բարդ բազմաալիքային պատկերավորումը B- և գունավոր դոպլեր ռեժիմների համակցումով Չափումներ, հաշվարկներ և ծրագրային ապահովումներ հետևյալ հետազոտությունների համար՝ • Գինեկոլոգիական • Հոդաին • Մակերեսային օրգանների • B-ռեժիմում պատկերների ավտոօպտիմիզացիա՝ ըստ հյուսվածքների ակուստիկ հատկությունների • Դոպլեր սպեկտրի ավտոօպտիմիզացիա • Տրապեցանման սկանավորում Ինֆորմացիայի պահպանում և արտահանում • Ներկառուցված աշխատանքային կայանի առկայություն • Կոշտ սկավառակի ծավալը ոչ պակաս, քան՝ 500գԲ • Տեսահանգույց ոչ պակաս, քան՝ 2200 կադր, 256 մԲ • Ստատիկ պատկերների արխիվացում կոշտ սկավառակի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ jpeg, DICOM • Ստատիկ պատկերների արխիվացում DVD/CD-RW սկավառակի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ jpeg, DICOM • Դինամիկ պատկերների արխիվացում կոշտ սկավառակի վրա, ոչ պակաս քան

հետևյալ ֆորմատներով՝ MPEG-4 և/կամ AVI, DICOM • Դինամիկ պատկերների արխիվացում DVD/CD-RW սկավառակի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ MPEG-4 և/կամ AVI, DICOM • Տվյալների անմիջական տեղափոխում USB քարտի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ jpeg և/կամ bmp, MPEG և/կամ AVI, DICOM • Ներկառուցված USB պորտերի քանակը ոչ պակաս, քան՝ 2 • "Թարմ" տվյալների պահպանում ներքին կամ արտաքին աշխատանքային միջավայրերում՝ հետագա վերամշակման հնարավորությամբ Մոնիտոր՝ TFT, ոչ պակաս, քան՝ 17", թույլատվություն, ոչ պակաս, քան՝ 1280x1024, Տվիչներ • Տվիչների միացման պորտերի քանակ, ոչ պակաս, քան՝ 3 1. Կոնվեքսային տվիչ - էլեմենտների քանակ առնվազն 128, հաճախականությունը, ոչ պակաս, քան՝ 2-4 ՄՀց տիրույթում, դիտարկման անկյունը ոչ պակաս, քան 55 աստիճան, շառավիղը ոչ պակաս, քան 50 մմ, 2. Գծային տվիչ - էլեմենտների քանակ առնվազն 128, հաճախականությունը, ոչ պակաս, քան՝ 5-13 ՄՀց տիրույթում, բացվածք, ոչ պակաս, քան՝ 40մմ, 3. Ներխոռոչային կոնվեքսային տվիչ, էլեմենտների քանակ առնվազն 128, հաճախականությունների դիապազոն ոչ պակաս, քան՝ 5-9 ՄՀց տիրույթում, շառավիղ՝ ոչ պակաս, քան 9մմ, դիտարկման անկյունը առնվազն 168 աստիճան, Սարքի հավաքակազմը՝ Սարք ներբեռնած համապատասխան ծրագրերով Կոնվեքսային տվիչ Գծային տվիչ Ներխոռոչային կոնվեքսային տվիչ (Հեշտոցային տվիչ) Թվային սև-սպիտակ տպիչ Անխափան սնուցման սարք, առցանց տեսակի Մատակարարը պարտավոր է տրամադրել սարքի օգտագործման ձեռնարկ՝ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով Մատակարարը պարտավոր է կատարել տեղադրում և ուսուցում Մատակարարը պարտավոր է տրամադրել՝ ոչ պակաս քան 1 տարվա երաշխիք Մատակարարը պարտավոր է մատակարարել ք. Աբովյան Հոսանքի սնուցման աղբյուր՝ 220Վ, 50Հց: Ապահովիչների առկայություն: Որակի սերտիֆիկատներ՝ CE կամ FDA Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ Г О С Т Р И С О 13485 կամ համարժեք Ապրանքը պետք է լինի չօգտագործված:(Կցված ֆայլ՝ lot_2_i_texnikakan_bnutagir.pdf) GENERAL Refrigerant ֆիրմայի, R410A, model – AOG60UMAYT 400V, 50Hz, 16,5kW, կամ համարժեքը»:

Հանձնաժողովը 23.11.2018թ. նիստի թիվ 9 արձանագրության 1-ին կետով ընդունել է ի գիտություն, որ 14.11.2018թ. «ՅՈՒՆԻՄԵՆ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից 2-րդ չափաբաժնի մասով, որի համար վերջինից պահանջվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը:

«ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել «ուլտրաձայնային հետազոտման համակարգ HS40» ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Դիագնոստիկ հետազոտությունների համար նախատեսված հատուկ հնարավորություններով թվային ուլտրաձայնային ստացիոնար համակարգ HS40:

Ճառագայթի թվային ձևավորիչը, ոչ պակաս, քան՝ 12 բիթ, ընդունման թվային վերամշակող ալիքների քանակը՝ 573.440, դինամիկ տիրույթը 256 Դբ,

լայնաշերտ և մուլտիհաճախականության սկանավորման առկայություն,

Էխո-ազդանշանների զուգահեռ մշակման առկայություն, Էխո-ազդանշանների քառալիքանի մշակման առկայություն,

Ֆոկուսներ ազդանշանի փոխանցման ժամանակ, 1-8,

սկանավորման խորությունը, 38 սմ,

պատկերի մեծացում մասշտաբի իրական ժամանակում՝ 16 անգամ, պատկերների սեզմենտար մեծացման առկայություն, "սառեցված" պատկերի մեծացում՝ 16 անգամ,

B-ռեժիմի առկայություն 2D, Կեղծ գունավորման քարտեզների քանակը՝ 1-11

M-ռեժիմի առկայություն՝ Կեղծ գունավորման քարտեզների քանակը՝ 1-11

B- և M-ռեժիմների համակցում,

Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն (PW)

- Անկյան կորեկցիան $\pm 80^\circ$, քայլը՝ 2°
- PRF տիրույթը՝ 100 - 27500 Հց.,
- Հայտնաբերվող մաքսիմալ արագություն՝ 8,8 մ/վրկ.
- Հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ 0,1 սմ/վրկ.
- B- և PW-ռեժիմների համակցում ռեալ ժամանակում

Գունավոր դոպլերի առկայություն

- PRF տիրույթը՝ 100 – 25000 Հց
- Հայտնաբերվող մաքսիմալ արագություն՝ 180 սմ/վրկ.
- Հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ 2,2 սմ/վրկ.
- Գունավորման քարտեզների քանակը՝ 1-12
- Գունավոր դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ, 400,
- B- և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,
- B-, M - և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,

- B-, PW - և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում,

- Սկանավորման անկյան փոփոխության տիրույթը գծային տվիչների համար, ոչ պակաս, քան՝ +/- 10 աստիճան

Անընդհատ-ալիքային դոպլերի առկայություն

- Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը՝ 28 մ/վրկ,
- Հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ 1 սմ/վրկ,
- PRF տիրույթը՝ 180 – 57000 Հց,

Էներգետիկ դոպլերի առկայություն

- PRF տիրույթը՝ 100 – 24.5000 Հց
- Գունային քարտեզների քանակը, 1-12

- B- և էներգետիկ դոպլեր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում

- Անոթների հունի պատկերավորման բարձր տարածական/ժամանակային լուծման ռեժիմի օգտագործումը բոլոր կոնվեքսային և գծային հաղորդիչներով,

- "• B-, PW- և Անոթների հունի պատկերավորման բարձր տարածական/ժամանակային լուծման ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում

Հյուսվածքային հարմոնիկա" • Հիմնական հյուսվածքային հարմոնիկայի ռեժիմ;

Բարդ բազմաալիքային պատկերավորում իրական ժամանակում;

Բարդ բազմաալիքային պատկերավորումը B- և գունավոր դոպլեր ռեժիմների համակցումով,

Չափումներ, հաշվարկներ և ծրագրային ապահովումներ հետևյալ հետազոտությունների համար՝

- Գինեկոլոգիական, Հոդաին, Մակերեսային օրգանների,

B-ռեժիմում պատկերների ավտոպտիմիզացիա,

Դոպլեր սպեկտրի ավտոպտիմիզացիա,

Տրապեցանման սկանավորում Ինֆորմացիայի պահպանում և արտահանում,

Ներկառուցված աշխատանքային կայանի առկայություն,

Կոշտ սկավառակի ծավալը ոչ պակաս, քան՝ 500գԲ+8գԲ,

Տեսահանգույց 45000 կադր, 256 մԲ,

Ստատիկ պատկերների արխիվացում կոշտ սկավառակի վրա, ոչ պակաս քան հետևյալ ֆորմատներով՝ jpeg, DICOM,

Դինամիկ պատկերների արխիվացում կոշտ սկավառակի վրա, հետևյալ ֆորմատներով՝ MPEG-4, AVI, JPEG, DICOM,

Տվյալների անմիջական տեղափոխում USB քարտի վրա, հետևյալ ֆորմատներով՝ jpeg MPEG-4, AVI, bmp, TIFF, DICOM,

Ներկառուցված USB պորտերի քանակը 6

"Թարմ" տվյալների պահպանում ներքին կամ արտաքին աշխատանքային միջավայրերում՝ հետագա վերամշակման հնարավորությամբ,

Մոնիտոր՝ LCD 21.5, թույլատվություն, 1280x800,

Տվիչներ

Տվիչների միացման պորտերի քանակ՝

1. Կոնվեքսային տվիչ - էլեմենտների քանակ 128, հաճախականությունը՝ 2-8 ՄՀց տիրույթում, դիտարկման անկյունը 68 աստիճան, շառավիղը 51 մմ,

2. Գծային տվիչ - էլեմենտների քանակ 128, հաճախականությունը, 5-12ՄՀց տիրույթում, բացվածք՝ 52մմ,

3. Ներխոռոչային կոնվեքսային տվիչ, էլեմենտների քանակ առնվազն 128, հաճախականությունների դիապազոն 4-9 ՄՀց տիրույթում, շառավիղ՝ 10մմ, դիտարկման անկյունը առնվազն 148 աստիճան,

Սարքի հավաքակազմը՝ Սարք ներբեռնած համապատասխան ծրագրերով Կոնվեքսային տվիչ, Գծային տվիչ, Ներխոռոչային կոնվեքսային տվիչ (Հեշտոցային տվիչ), Թվային սև-սպիտակ տպիչ, Անխափան սնուցման սարք, առցանց տեսակի:

Մատակարարը պարտավոր է տրամադրել սարքի օգտագործման ձեռնարկ՝ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

Մատակարարը պարտավոր է կատարել տեղադրում և ուսուցում:

Երաշխիք՝ 1.5 տարի: Ապրանքը օգտագործված չէ»:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ 19.11.2018թ. «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են փաստաթղթերը: Ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Հանձնաժողովն արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները.

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջները	«ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր
--	--

<p>Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն (PW)</p> <ul style="list-style-type: none"> • PRF տիրույթը, ոչ պակաս, քան՝ 300 - 27900 Հգ., 	<p>Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն (PW)</p> <ul style="list-style-type: none"> • PRF տիրույթը՝ 100 - 27500 Հգ.,
<p>Գունավոր դոպլերի առկայություն Հայտնաբերվող մաքսիմալ արագություն՝ ոչ պակաս քան 181 սմ/վրկ.</p>	<p>Գունավոր դոպլերի առկայություն Հայտնաբերվող մաքսիմալ արագություն՝ 180 սմ/վրկ.</p>
<p>Գծային տվիչ - էլեմենտների քանակ 128, հաճախականությունը, ոչ պակաս քան 5-13ՄՀգ տիրույթում, բացվածք՝ ոչ պակաս քան՝ 40մմ,</p>	<p>Գծային տվիչ - էլեմենտների քանակ 128, հաճախականությունը, 5-12ՄՀգ տիրույթում, բացվածք՝ 52մմ, կամ էլեմենտների քանակ 192, հաճախականությունը, 3-16ՄՀգ տիրույթում, բացվածք՝ 38,4 մմ, պատվիրատուի ընտրությամբ</p>
<p>Ներխոռոչային կոնվեքսային տվիչ, էլեմենտների քանակ առնվազն 128, հաճախականությունների դիապազոն ոչ պակաս քան 4-9 ՄՀգ տիրույթում, շառավիղ՝ ոչ պակաս քան 9մմ, դիտարկման անկյունը առնվազն 168 աստիճան</p>	<p>Ներխոռոչային կոնվեքսային տվիչ, էլեմենտների քանակ առնվազն 128, հաճախականությունների դիապազոն 4-9 ՄՀգ տիրույթում, շառավիղ՝ 10մմ, դիտարկման անկյունը առնվազն 148 աստիճան</p>

Ելնելով վերոգրյալից, հանձնաժողովը որոշել է «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀԶ ՍՊԸ-ին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

26.11.2018թ. «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀԶ ՍՊԸ-ն Աճուրդի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է պարզաբանում հետևյալ բովանդակությամբ.

«Պահանջվող սարքավորման տեխնիկական պահանջները բաղկացած են եղել ընդհանուր 64 տվյալներից /պարամետրերից/:

Մեր կողմից առաջարկված սարքավորումը 38 պարամետրերով համապատասխանում է և բավարարում պահանջված պայմաններին:

22 պարամետրերով կան բացարձակ առավելություններ պահանջված ցուցանիշներից, օրինակ՝

- պահանջված մոնիտոր՝ 17", թույլատվությունը՝ 1280x1024 փոխարեն, մեր առաջարկված սարքի մոնիտորը՝ LCD 21.5", թույլատվություն՝ 1920x1080 և հավելյալ հպումային էկրան՝ Touch Screen 10.1" թույլատվություն՝ 1280x800, որից արդեն իսկ պարզ է, որ առաջարկված սարքը ավելի բարձր դասի է, քան պահանջվածը.

- պահանջված սկանավորման խորությունը՝ 30 սմ-ի փոխարեն 38 սմ;

- Դինամիկ տիրույթը՝ 208 Դբփոխարեն 256 Դբ;

- Հաղորդման/ընդունման թվային վերամշակվող ալիքների քանակը՝ 65000 փոխարեն 573.440

- Բոլոր դոպլերների ռեժիմում գունավորման քարտեզների քանակը՝ պահանջված 6 կամ 8 փոխարեն 1-12;

- Գունավոր դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ՝ պահանջված 227 փոխարեն 400;

- Բոլոր դոպլերների ռեժիմում հայտնաբերվող մաքսիմալ և մինիմալ արագությունների առավելություն;

- Տեսահանգույց՝ պահանջված 2200 կադրի փոխարեն 45000 կադր, 256 մԲ;

- Չափումների, հաշվարկներ և ծրագրային ապահովումների պահանջված միայն Գինեկոլոգիական, Հոդաին և Մակերեսային օրգանների հետազոտությունների փոխարեն՝ Գինեկոլոգիական, Հոդաին, Մակերեսային օրգանների, Ընդհանուր ռադիոլոգիա, Որովայն, Մանկաբարձական, Մանկաբուժական, Անոթային, Մուսկուլոսկելետալ, Սրտային;

- Գծային 5-13ՄՀց հաճախականության 128 էլեմենտներով տվիչի փոխարեն առաջարկվում է գծային ավելի մեծ տիրույթով 3-16 ՄՀց հաճախականության 192 էլեմենտներով տվիչ;

- Ներխոռոչային կոնվեք ստվիչի 5-9Մհց հաճախականության փոխարեն առաջարկվել է ավելի մեծ տիրույթով 4-9ՄՀց հաճախականության տվիչ:

Թվով 4 տեխնիկական ցուցանիշներ ունեն անհամապատասխանություն, որոնց մասին էլ տալիս ենք հետևալ պարզաբանումները՝

1. PRF տիրույթը՝ ոչ պակաս 300-27900Հց պահանջի դիմաց առաջարկվել է PRF տիրույթ 100-27500Հց: Այսինքն՝ պահանջված 27.600 Հց հաճախականության տիրույթի փոխարեն առաջարկվել է 27400Հց հաճախականության տիրույթ, տարբերությունը 200Հց է,

որն էլ կազմում է պահանջվող մաքսիմալ հաճախականության ընդամենը 0.55%, որը ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ հետազոտությունների որակի վրա:

Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը, ոչ պակաս քան 181 սմ/վրկ փոխարեն առաջարկվել է 180սմ/վրկ, տարբերությունը 1սմ/վրկ, որը կազմում է մաքսիմալ արագության 0.77%, որը նույնպես չի ազդելու հետազոտությունների որակի կամ հնարավորության վրա:

3.9ծային 5-13ՄՀց հաճախականության 128 էլեմենտներով տվիչի փոխարեն առաջարկվել է այլընտրանքային երկու տվիչ ըստ պատվիրատուի ընտրության՝

Մեկը՝ 5-12ՄՀց տիրույթով 128 էլեմենտով,

Մյուսը՝ 3-16ՄՀց տիրույթով 192 էլեմենտով:

Եթե առաջին առաջարկը /5-12Մհց/ չի բավարարում վերին սահմանին 1Մհց-ով պակաս լինելու պատճառով, ապա երկրորդ առաջարկը /3-16Մհց/ ունի առավելություն 2Մհց-ով պահանջված ներքևի սահմանից և 3Մհց-ով պահանջված վերևի սահմանից:

Պահանջված 5-12Մհց տվիչի հաճախականության տիրույթը կազմում է 8ՄՀց, իսկ առաջարկված 3-16ՄՀց-ի դեպքում 13Մհց:

Բացի այդ, պահանջված տվիչի էլեմենտների քանակը՝ 128, առաջարկվածը՝ 192:

Ինչ վերաբերվում է տվիչների բացվածքի տարբերությանը, այն կազմում է 1.6մմ և առանց բարդության կարգավորվում է տվիչի աննշան տեղափոխման միջոցով:

4. Պահանջված ներխոռոչային կոնվեքս տվիչի 5-9Մհց հաճախականության փոխարեն առաջարկվել է 4-9ՄՀց տվիչ, այսինքն՝ պահանջի հաճախականության տիրույթը 4ՄՀց, իսկ առաջարկվածը՝ 5Մհց: Դիտարկման անկյան տարբերությունը նույնպես կարգավորվում է ավելի մեծ հաճախականության տվիչի միջոցով:

Կարծիք է առաջանում, որ հանձնաժողովի կողմից չի կատարվում առաջարկված սարքավորումների մասնագիտական ուսումնասիրություն սարքի ֆունկցիոնալ համապատասխան լինելու վերաբերյալ, այլ կատարվում է պահանջարկի և առաջարկի տառաթվային համեմատություն:

Ամենայն հավանականությամբ ենթադրվում է, որ հաջորդ առաջարկը ներկայացրած կամ նրա հետնորդ ընկերության կողմից ներկայացրած սարքի տեխնիկական բնութագրերը կնույնականացնեն պահանջվող սարքի տեխնիկական բնութագրերին և կհուշեն, թե որ ընկերության կողմից է կազմված և որպես պահանջ ներկայացված տեխնիկական բնութագիրը: Սակայն, հաջորդի հաղթելու դեպքում, հայտնաբերված ամենաչնչին տարբերության համար անտեղի և անիմաստ կկորցնի առանց այն էլ չբավարարող բյուջեից, առաջին դեպքում 8 և ավելի մլն ՀՀդրամ, իսկ հաջորդների դեպքում՝ էլ ավելի:»:

Հանձնաժողովի 28.11.2018թ. կայացած նիստի թիվ 10 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը բավարար հիմք չէ վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը բավարար գնահատելու համար, ուստի Հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է, որ Աճուրդի շրջանակներում Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր Հանձնաժողովի կողմից գնահատվել է Հրավերի պահանջներին չհամապատասխանող, ինչի վերաբերյալ Ընկերությունն ուղարկել է պարզաբանում՝ նշելով առաջարկվող սարքի բազմաթիվ ակնհայտ առավելությունները, Հրավերով պահանջված սարքից ավելի բարձր դասի պատկանելիությունը: Սակայն, Ըստ բողոքաբերի, պարզաբանումը չի ընդունվել Հանձնաժողովի կողմից և վերջինս՝ արձանագրելով առաջարկվող սարքի չնչին և ոչ էական տարբերությունները, մերժել է Ընկերության կողմից ներկայացված հայտը:

Բողոքաբերը բողոքում նշել է, որ Աճուրդի շրջանակներում պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագիրը բաղկացած է եղել ընդհանուր 64 պարամետրերից, որոնցից իրենց կողմից առաջարկվող սարքավորումը 38 պարամետրերով համապատասխանում է պահանջված պայմաններին, իսկ 22 պարամետրերով կան բացարձակ առավելություններ պահանջված ցուցանիշներից:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ կողմերը պնդեցին Բողոքի քննության շրջանակներում հայտնած գրավոր դիրքորոշումներն ամբողջությամբ:

Պատասխանատուի ներկայացուցիչն՝ անդրադառնալով հանձնաժողովի կողմից Ընկերության առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանություններին, հայտնեց, որ Հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակներում՝ գնահատել է Ընկերության հայտը Հրավերով սահմանված պահանջների համապատասխանության տեսակետից: Ըստ այդմ, արձանագրելով Հրավերի տեխնիկական բնութագրի պահանջների նկատմամբ կոնկրետ անհամապատասխանություններ՝ Հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

«ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին տեղեկացրեց, որ Ընկերության կողմից առաջարկվող՝ «ուլտրաձայնային հետազոտման համակարգ HS40» ախտորոշիչ սարքը կատարողական կամ ֆունկցիոնալ առումով բացարձակապես չի զիջում, Պատվիրատուի կողմից Հրավերով պահանջված սարքին, ավելին, որոշ պարամետրերով անգամ գերազանցում է դրան: Մանրամասն անդրադառնալով Հանձնաժողովի կողմից արձանագրված գնահատման արդյունքներին, Ընկերության ներկայացուցիչն ընդունեց, որ առկա են որոշ անհամապատասխանություններ, թեև պնդեց, որ դրանք չեն կարող սարքի շահագործման ընթացքում հանգեցնել դրա որևէ ֆունկցիոնալ շեղման, այսինքն, առաջարկվող սարքն ամբողջության բավարարում է Պատվիրատուի կարիքին:

Բողոքներ քննող անձը պահանջեց, որպեսզի Ընկերությունը ներկայացնի իրավասու մարմնի կողմից տրամադրված մասնագիտական կարծիք՝ լիցենզավորված կազմակերպության մասնագիտական եզրակացությունն առ այն, որ Ընկերության կողմից Աճուրդի շրջանակներում առաջարկված սարքն իր պարամետրերով ֆունկցիոնալ առումով համարժեք է Պատվիրատուի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Սակայն, Բողոքի քննության շրջանակներում լիցենզավորված որևէ կազմակերպության մասնագիտական եզրակացություն Ընկերության կողմից չներկայացվեց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ)

-32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով

ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

- 46-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Հանձնաժողովը «ՅՈՒՆԻՄԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրել է անհամապատասխանություններ, և մերժել է վերջինիս հատը՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանված պարամետրերին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

- «ՅՈՒՆԻՍԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն Աճուրդի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է պարզաբանումներ՝ իր կողմից Աճուրդի շրջանակներում ներկայացված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի վերաբերյալ, որոնք Հանձնաժողովի կողմից չեն գնահատվել որպես բավարար հիմք՝ ներկայացված տեխնիկական բնութագիրը բավարար գնահատելու համար:

- Բողոքի քննության շրջանակներում Ընկերության կողմից որևէ լից չնվազված կազմակերպության կողմից տրամադրված մասնագիտական եզրակացություն չներկայացվեց, և չապացուցվեց, որ առաջարկված սարքը ֆուկցիոնալ առումով համարժեք է Հրավերով նախատեսված գնման ենթակա առարկային:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՅՈՒՆԻՍԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից Աճուրդի շրջանակներում ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ Հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար, Հանձնաժողովը «ՅՈՒՆԻՍԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելով և մերժելով՝ գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՅՈՒՆԻՍԵԴ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից 03.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ